

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՏԻՆ ՆԱԼԲԱՇՅԱՆ

Հայ-ռուսական (պլավինական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ԿԱԼԱՆՔԻ՝ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԺԻ ՆԾԱՆԿԱՍԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

1966 թ. դեկտեմբերի 16-ին ընդունված «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային փաստարություն սահմանում է, որ յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելության իրավունքը: Ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերքակալության և պահել կալանքի տակ: Ոչ ոք չպետք է զրկված լինի ազատությունից այլապես, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգով, որոնք սահմանված են օրենքով:

Գործող օրենսդրության համապատասխան՝ դատարանը հանցագործություն կատարած անձի նկատմամբ պատիժ նշանակելիս պետք է դեկավարվի ինչպես միջազգային փաստարդիքերով, այնպես և ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի հոդվածներով, որոնք պատասխանատվություն են սահմանում կոնկրետ այս կամ այն հանցագոր արարքի համար:

Ինչպես սահմանում է ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածը (Ո՞Դ քրեական օրենսգրքի 60-րդ հոդված), հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է սույն օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով սույն օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցագորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Նշված հոդվածի 3-րդ մասը հոչակում է, որ հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

Այս ամենը հաշվի առնելով՝ պատիժ նշանակելիս դատարանը իրականացնում է պատժի ան-

հատականացման կարևորագույն սկզբունքը, որը սահմանված է գործող՝ ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածում (Ո՞Դ քրեական օրենսգրքի 6-րդ հոդված): Համաձայն այդ հոդվածի՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժը և քրեափական ներգործության այլ միջոցները պետք է լինեն արդարացի, համապատասխանեն հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցագորի անձնավորությունը անհրաժեշտ ու բավարար լինեն նրան ուղղելու և նոր հանցագործությունները կանխելու համար:

Ինչպես նշում է Ե.Արտամնովան, արդարության սկզբունքը դրված է իրավունքի բուն բովանդակության մեջ և դրսևորվում է դրա կոնկրետ ճյուղերում, այդ թվում՝ քրեական իրավունքում¹: Հաւաքանակի է, որ արդարության սկզբունքը քրեական օրենսդրության մեջ իր արտացոլումը պետք է գտնի հատուկ մասի սանկցիայում: Պատժամիջոցները կիրառվում են կոնկրետ հանցագորի նկատմամբ՝ ելնելով նրա կողմից կատարած արարքի հասարակական վտանգավորության աստիճանից: Այդ առումնեվ պատժամիջոցը արդարացի կիամարվի, եթե այն համապատասխանի հոդվածի դիսպոզիցիայում նշված արարքի եռթյանը, հանցագորի անձնավորությանը և այն մեղմացնող ու ծանրացնող հանգամանքների ամբողջությանը, որոնք կրում է մեղավոր անձը մինչև դատարանի կողմից դատավճիռ արձակելը:

Պատժի անհատականացման սկզբունքը արտահայտվում է հանցագործության կատարման մեջ մեղավոր ճանաչված անձի նկատմամբ համապատասխան պատժատեսակի և պատժաչափի սահմանմամբ, որը համապատասխանում է արարքի հասարակական վտանգավորության բնույթին ու աստիճանին, որի ընթացքում հաշվի են առնված ինչպես հանցագորի անձը, այնպես էլ պատիժն ու պատասխանատվությունը ծանրացնող ու մեղմացնող հանգամանքները²:

Օրենքի մեջ ամրագրված սկզբունքի բոլոր

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տարրերը, այդ թվում և անհատականացման սկզբունքը, կյանքի են կոչվում դատարանի կողմից հատուկ մասի հոդվածին համապատասխան պատժաշափ սահմանելու ընթացքում:

Կալանքը՝ որպես պատժատեսակ, քրեական օրենսգրքի հասուկ մասի հոդվածներում նախատեսված է երկրնտելիության սկզբունքով, քրեական օրենսգրքի այլ պատժատեսակների հետ, հիմնականում տուգանքի և որոշակի ժամկետով ազատազրկման հետ: Հետևաբար, դատարանը, դեկազրկելով քրեական պատիժ նշանակելու ընդիանուր սկզբունքներով, որոշում է, թե հատուկ մասի հոդվածի նախատեսված որ պատժատեսակը պետք է կիրառի կոնկրետ դատավճիռ արձակելիս, որը առավելագույնս կհամապատասխանի կատարված հանցագործության՝ հանրության համար ծանրության աստիճանին, հանցավորի անձնավորությանը, պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող ու մեղմացնող հանգամանքներին:

Ընդհանրապես երկրնտելի պատժատեսակների նախատեսումը կոնկրետ հանցագործության համար նախատեսված հոդվածի սամկցիայում հնարավորություն է տալիս արդարադատություն իրականացնող մարմնին՝ դատարանին, առավել անհատական մոտեցում դրսերել հանցագործության սույբեկտի գործողությունների (անգործության) գնահատման հարցում և ընտրել առավել նպատակահարմար պատժատեսակը, որը կապահովի պատժի նպատակների իրականացման ապահովումը:

Կարլ Մարքսը պատժի անհատականացման մասին նշել է, թե խնդիրը կայանում է նրանում, որ պատիժը հանդիսանա հանցագործության անմիջական հետևանքը: Հանցավորի աշքում պատիժը պետք է երևա որպես իր գործունեության անհրաժեշտ արդյունք, այսինքն՝ իր սեփական գործունեությունը: Պատժի սահմանները որոշվում են նրա կողմից կատարված հանցագործության սահմաններով, իրավախախտման որոշակի բովանդակությամբ³:

Քրեական պատասխանատվության և պատժի անհատականացումը հանդիսանում է քրեաբրավական հիմնարար սկզբունքներից մեկը, որը հիմնաված է պատժի նպատակների վրա և ելնում է նրանից, որ չեն կարող լինել բացարձակապես կրկնվող հանցագործություններ և հանցագործներ: Լայն իմաստով անհատականացման սկզբունքը տարածվում է իրավակիրառ գործունեության մի

շարք փուլերի՝ պատժի նշանակման, կատարման, պատժի կրումից լրիվ կամ մասնակի ազատման վրա⁴:

Պատժի անհատականացման սկզբունքն իրականացվում է հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ արդարացի, հոդվածի սամկցիայով նախատեսված պատիժների նշանակման գործնթացում, բացառությամբ այն դեպքերի, եթե դատարանը, հաշվի առնելով քրեական գործի դատարաննության արդյունքում հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ դրսերումների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայությունը, որոնք էականորեն կարող են նվազեցնել հանցանքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, ինչպես նաև խմբակային հանցագործության մասնակցի կողմից կատարած հանցանքը բացահայտելուն ակտիվորեն աջակցելու դեպքում, կարող է նշանակել ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով, կամ չկիրառել որպես պարտադիր նախատեսված լրացուցիչ պատիժ (ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված, ՈԴ քրեական օրենսգրքի 64-րդ հոդված): Նույն հոդվածի 2-րդ մասը հոչակում է, որ բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

Դատարանը, հաշվի առնելով հանցագործության հասարակական վտանգավորության բնույթը ու աստիճանը, հանցավորի անձը բնութագրող անհատական հատկանիշները, կալանքի ձևով պատիժ նշանակելիս պարտավոր է այդ պատժատեսակի այնպիսի չափ (ժամկետ) սահմանել, որն առավել կնպաստի քրեական պատժի նպատակների իրականացմանը, որը բխում է քրեական օրենսդրության ընդհանուր սկզբունքներից: Պետք է արձանագրել, որ պատժի ծանրությունը, նրա պատժողական էությունը արտահայտվում է ոչ թե այդ պատժատեսակի մեջ, այլ նաև դրա չափի մեջ⁵:

Այստեղ արդարացվում է կալանքի՝ որպես քրեական պատժատեսակի ժամկետի երկարեցումը մինչև վեց ամիս սահմանելը, և դատարանը, հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները, կարող է որոշակի ժամկետ սահմանել, որն ամ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

փոփած կլինի հողվածի սանկցիայում:

Մեր կարծիքով, օրենսդիրը, նման ժամանակահատված սահմանելով կալանքի համար, դատարանին հնարավորություն կրնակունի կատարած հանցանքի համար ավելի ճկունությամբ անհատականացնել քրեական պատիժը՝ հաշվի առնելով ինչպես արարքի վտանգավորության աստիճանը, հանցավորի անձը, այնպես էլ պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները, որ նախատեսված կլինեն հողվածի սանկցիայում⁶:

Հանցագործության հասարակական վտանգավորությունը հաճախ կախված է այն հետևանքներից, որոնք վրա են հասնում հանցագործության կատարմամբ (հանցագործությամբ պատճառված վնասի չափը, անձի մեղքի աստիճանը և այլն):⁷

Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը հաշվի առնելով՝ դատարանը նշանակում է հողվածի սանկցիայով նախատեսված կալանքի որոշակի ժամկետ, այսինքն՝ արարքի հասարակական վտանգավորության աստիճանից ելնելով՝ կալանքի ժամկետը կարող է ավելի բարձր լինել: Եվ ընդհակառակը, եթե արարքը իրենից նվազ վտանգավորություն է ներկայացնում, կալանքի ժամկետը հողվածի սանկցիայով նախատեսված ժամկետներից դատարանը պետք է ընտրի ամենակարճատևը: Սակայն, պրակտիկան ցույց է տալիս, որ կալանքի կիրառումը դատարանների կողմից շատ չնշին է: Դա պայմանավորված է առաջին հերթին նրանով, որ արդարադատության մարմինները կալանքը դիտարկում են կարճատև ազատազրկման տարատեսակ և ժամկետի օրենսդրական սահմանումը նրանց մոտ այն համոզմունքը չի ձևափրել, որ ոչ մեծ և միջին ծանրության արարքներ կատարած անձանց նկատմամբ այդ պատժատեսակի կիրառումը կարող է ապահովել պատժի նպատակների իրականացումը:

Գործող օրենսգրքում շատ թվով հողվածներ կան, որոնց սանկցիաներում այլ պատժատեսակների հետ մեկտեղ նախատեսված է կալանքի կիրառման հնարավորությունը. դա կարող է վերաբերել նաև հանցակցությամբ կատարված հանցագործություններին, այսպես ասած, «երկրորդական» մասնակիցների նկատմամբ պատիժ սահմանելուն, հանցափորձի դեպքերին և այլն: Նման իրավիճակներում, կարծում ենք, կալանքի կիրառումը արդյունավետ կլինի և կնպաստի նման արարքների հեղինակների նկատմամբ արդյունա-

վետ ներգործության ազդեցությանը, պատժի նպատակների արդյունավետ իրականացմանը, միաժամանակ կրերի կալանքի կիրառման թվաքանակի ավելացմանը: Հակառակ դեպքում, եթե նման հարաբերությունների կարգավորման ընթացքում նպատակահարմար չի համարվում կալանք կիրառել, այդ պատժատեսակը կմնա «ստվերում»՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով, թեկուզ և այն առումով, որ դատարանները ավելի հաճախ կիրառեն կարճատև ազատազրկումը, որը միշտ չէ, որ արդյունավետ կարող է ազդել դատապարտյալ վրա:

Իրավաբանական գրականության մեջ բազմից է արծարծվել այն թեզը, որ կարճաժամկետ ազատությունից զրկելը չի տալիս այն ցանկալի արդյունքը, որն ակնկալում է դատարանը: Կարճաժամկետ ազատությունից զրկելը, այդ թվում կալանքի ձևով նշանակված պատժատեսակը, ոչ միշտ են հանգեցնում դաստիարակչական և կանխարգելի արդյունքի⁸: Սակայն, պետք է շեշտել, որ այն դեպքում, եթե քրեական գործի հանգամանքները և հանցավորի անձը ուղղման և վերադաստիարակման համոզմունք են ներշնչում դատարանին, ինչպես նաև հանցագործությունների կանխարգելումը ապահովելու խնդրում, նպատակահարմար է ավելի հաճախ կիրառել կալանքը, քանի որ կալանքը, ունենալով ազդեցության որոշակի և հստակ տարրեր, ավելի ներգործուն ազդեցություն կրողնի դատապարտյալ վրա՝ նրան ուղղելու, նրան հետագայում հանցագործություններ կատարելու մտքից հեռու պահելու և, որ ամենակարևորն է, կալանքի դատապարտվածը ազատազրկման վայրում չի շփվի այլ դատապարտյալների հետ, որոնք պատիժը կրում են ազատազրկման ձևով և կարող են բացասական ազդեցություն ունենալ նրա վրա: Ինչպես օրենսդիրն է պահանջում, կալանքի դատապարտված անձը շփվում է միայն կալանքի դատապարտվածների հետ, խստ մեկուսացման պայմաններում, որի ժամանակ նրա շփումները հասցվում են մինիմումի:

- ¹ Տե՛ս Արտամոնova Е.Օ. О назначении наказания с позиций справедливости, “Правозащитник”, 2004, N 1, С. 36.
- ¹ Տե՛ս Загородников Н.И. Принципы уголовного права, “Советское государство и право”. 1966, N 5, С. 74.
- ¹ Տե՛ս Маркс К. и Энгельс Ф. Соч. 2-е изд., Т.1, С. 124.
- ¹ Տե՛ս՝ Թաղեկային Լ.Զ. Ղավարտված հանցավոր գործունեության համար քրեական պատասխանատվության հիմնահարցերը. Երևան, 2007, էջ 239:
- ¹ Տե՛ս Տածոսյան Զ.Ա. Штраф как мера наказания. Ереван, 1978. С. 65.
- ¹ Տե՛ս Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений, “Юридическая литература”, М., 1972. С. 318, Գրիգորյան Մ.Վ. Հանցագործությունների դրակումը, Երևան, 2010 էջ 35:
- ¹ Տե՛ս Бродинина М. Уголовный закон и его применение “Юридическая литература”, М., 1967. С. 199, Пионтковский А.А. Учение о преступлении, Госюриздан, М., 1961. С. 157.
- ¹ Տե՛ս Никифоров Б.С. Некоторые вопросы уголовного права в условиях общественного государства, «Советское государство и право», 1963, N4, С. 69.

РЕЗЮМЕ***Некоторые вопросы назначения ареста, как меры наказания***

Арест, как мера наказания, в достижении целей наказания еще не достаточен для вынесения законного и обоснованного приговора. Любой уголовный вид наказания, в том числе арест, может обеспечить цели статьи 48 Уголовного кодекса Республики Армения (ст.43 У РФ), только в том случае, если он исполнен в строгом соответствии, т.е. притворяется в жизнь согласно установленным процедурам.

Ключевые слова: преступление, санкция, арест, лишение свободы, право неприкосновенности, уголовный кодекс, вид наказания, принцип правосудия, штраф, приговор.

SUMMARY***Some questions of arrest appointment as a type of criminal penalty***

It is not enough to make a lawful and grounded verdict to achieve the goals of detention as criminal penalty. Any type of criminal penalty, including detention, can be ensured by Article 48 of RA Criminal Code (Article 43 of RF Criminal Code) only in case of proper implementation, that is to say according to adjusted procedure.

Key words: crime, sanction, detention, criminal code, type of punishment, principle of justice, penalty, verdict.